



Այբ

ավագ դպրոց



«Այբ» ավագ դպրոց

Սովորելու նոր մշակույթ



Այբ ավագ դպրոց

Սովորելու նոր մշակույթ



«Այբ» ավագ դպրոցը բյուրեղացում է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում՝ ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձեռավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր:


Մենք կերտում ենք մոդել... դարերի համար:

Մենք ստեղծում ենք «Հայկական դպրոցի» բրենդը:

«Այբ»-ը՝ որպես

սրբոց Թարգմանչաց Նոր շարժում

Պատասխանատվություն ստանձնած թիմ



Ե դարում սբ Մեսրոպի, սբ Սահակի եւ Նրանց աշակերտների շնորհիվ ստեղծվեցին ազգային գիր, գրականություն, երաժշտություն, դպրոց:

Այս հանճարեղ մարդկանց համագործակցությունը վերածվեց դարերով շարունակվող շարժման եւ ապահովեց հայ ժողովրդի շարունակականությունը մինչեւ մեր օրերը: Այս յուրահատուկ շարժման շնորհիվ հոգեւոր արժեքները եւ կրթությունը դարձան հայերի ազգային ինքնագիտակցության հիմք: «Այբ»-ն այսօր յուրատեսակ շարունակությունն է սրբոց Թարգմանչաց շարժման ոգու: Միավորելով կրթությամբ կայացած եւ կրթության մեջ ներդրում կատարելու պատրաստակամ մարդկանց՝ մենք համախմբում ենք Նոր որակներ, գիտակցված արժեքներ, ապրված իրողություններ:

Այսօր գաղափարակից մարդկանց փորձառությամբ, ջանքերով եւ ներդրումներով ստեղծվում եւ մշակվում է հայ Նոր դպրության ճարտարապետությունն իր բովանդակային, համակարգային, միջավայրային լուծումներով: Մեզանից յուրաքանչյուրն իր անցած ճանապարհով եւ իր գիտակից մասնակցությամբ հարստացնում եւ հզորացնում է մեր ակունքներից եկող այս շարժումը՝ ճանապարհ բացելով ապագա սերունդների համար:

«Այբ»-ի թիմն իր արժեքներով, շահադրդվածությամբ, նպատակասլացությամբ բացառիկ է: «Այբ»-ը մշակել եւ դպրոցաշինության ծրագրի հաջողված օրինակով փորձարկել է համայնքաստեղծման եւ գաղափարի շուրջ մարդկանց միավորելու եզակի մեխանիզմ: Եվ այդ մարդկանց նվիրման շնորհիվ է, որ «Այբ» դպրոցը գործում է այսօր:

- «Այբ» դպրոցի հիմքում ընկած են՝
- կրթությամբ կայացած մարդկանց տարիների փորձառություն.
- համաշխարհային փորձի եւ Նորագույն տեխնոլոգիաների մանրազնին ուսումնասիրություն.
- առաջատար հաստատությունների հետ պտղաբեր համագործակցություն.
- կրթական ծրագրերի իրականացման հարուստ կենսագրություն.
- գիտակցված ֆինանսական ներդրումներ.
- պարզապես ջերմություն եւ պատասխանատվություն:

Կրթությանն աջակցողների համաշխարհային ցանց

Հայաստանը՝ Կրթություն արտահանող



«Այբ»-ի՝ կրթությամբ վերափոխվելու գաղափարն այսօր համախմբել է մարդկանց, ովքեր կյանքում կայացել են կրթության շնորհիվ եւ այսօր իրենց ժամանակը, ֆինանսական միջոցներն ու հեղինակությունը ներդնում են կրթության զարգացման մեջ:

«Այբ» համայնքի աշխարհասփյուռ գաղափարակիցների, աջակիցների, բարերարների, մասնագետների ջանքերով երեկվա երագանքն այսօր արդեն իրականություն է: «Այբ» դպրոցի ծրագրին մասնակից մարդկանց այս բացառիկ ցանցն այսօր գործում է որպես մենտորական մի հզոր համակարգ, ուր ամեն մեկը, օգտագործելով իր գիտելիքը, փորձն ու կապերը, նպաստում է նոր տաղանդի բացահայտմանն ու զարգացմանը, այն համոզմամբ, որ կյանքում կայանալուց հետո նա էլ ձեռք կմեկնի իրենից հետո եկողներին:




«Այբ»-ի տեսլականն է «Հայկական դպրոցի» հայեցակարգը տարածել Հայաստանի սահմաններից դուրս:

Մենք աշխարհասփյուռ ազգ ենք եւ կրթությունը դիտում ենք որպես ամենահզոր, եթե ոչ միակ, ճանապարհը՝ հասնելու հայ ազգի պատմական, մշակութային եւ հոգեւոր ամբողջականությանը:

Այսօր հսկայական է մրցունակ հայկական դպրոցների պահանջը Սփյուռքում: Հայաստանը կարող է հանդես գալ որպես կրթություն արտահանող՝ սահմանելով կրթական համընդհանուր որակներ ու չափանիշներ աշխարհասփյուռ հայկական համայնքներում, ապահովելով մրցունակ կրթություն թե՛ հայերի եւ թե՛ օտարերկրացիների համար, տարածելով հայկական մշակույթը, ամրապնդելով Հայաստան-Սփյուռք համագործակցությունը:

«Այբ»-ի տեսլականն է ունենալ «Այբ» միջազգային դպրոցներ ամբողջ աշխարհում:

Մեր Նախագծերում փորձարկված մոտեցումները՝ հաջողության գրավական



Մինչև դպրոցի նախագծի իրականացումը մենք փորձարկել ենք բազմաթիվ կրթական տեխնոլոգիաներ եւ գործընթացներ մեր այլ նախագծերի միջոցով՝ սկսած 2006թ. մեր հիմնադրումից:

Դասավանդման մեթոդաբանությունը փորձարկվել է «Առարկայական խորացված դասընթացներ» ծրագրում, աշակերտների ընտրությունը՝ միջազգային դպրոցական մրցաշարերի միջոցով, ուսուցիչների վերապատրաստումը՝ «Վարպետության դասընթացներ» ծրագրով, շնորհալի երեխաների համար կրթաթոշակներ գտնելու արդյունավետ մոտեցումներն ու տարբերակները՝ «Կրթաթոշակներ» նախագծի միջոցով: Մենք ստեղծել ենք որակյալ կրթական միջավայրեր՝ ուսումնական լաբորատորիաների («ԱյբԼաբ»-երի) հիմնադրման միջոցով:

Ի հավելումս թվարկվածի՝ մենք մշակել ենք դպրոցի կառավարման համակարգը եւ ստացել հանրության աջակցությունը նախագծին՝ քննարկումների մի ողջ շարքի արդյունքում:

Այժմ ուրախ ենք արձանագրելու, որ «Այբ» դպրոցը նախագծից վերածվել է իրականության:




Կրթության հեռանկարները. փիլիսոփայություն, հայեցակարգ, մոտեցումներ

«Այբ» դպրոցի ճարտարապետական հայեցակարգի եւ լուծումների հիմքը դրվեց Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) հետ կայացած աշխատանքային բնարկման (Design Charrette) ժամանակ, որին մասնակցում էին MIT-ի մասնագետների խումբը եւ «Այբ»-ի պատվիրակության անդամները Յայաստանից, Ռուսաստանից եւ ԱՄՆ-ից:

Յայաստանը բարեփոխելու ամենաշնորհակալ ձեւը

Մենք՝ «Այբ»-ի հիմնադիրներս, հավատում ենք, որ կյանքում կայացել եւ հաջողությունների ենք հասել շնորհիվ կրթության: Ցանկանալով նպատակել Յայաստանի զարգացմանը եւ ունենալով մեր ժամանակը, ջանքերն ու նյութական միջոցները ներդնելու բազմաթիվ հնարավորություններ՝ մենք ընտրեցինք մեր երկիրը բարեփոխելու ամենաշնորհակալ ձեւը՝ կրթել նոր սերունդ, ներդրում կատարել ապագայի մեջ եւ *հանուն* ապագայի: Ահա թե ինչպես հիմնադրվեցին «Այբ» ակումբն ու «Այբ» կրթական հիմնադրամը:



Նորարարական ուսուցում՝ հիմնված ավանդույթների վրա

Մենք ուսումնասիրեցինք Յայաստանի դպրոցները՝ առկա իրավիճակը գնահատելու նպատակով: Վերհանեցինք Մետրոպոլիտան դպրոցական սկզբունքներն ու փորձեցինք հասկանալ՝ որքանով են դրանք պահպանված այսօրվա դպրոցական հայեցակարգում: Այցելեցինք աշխարհի առաջատար կրթօջախներ՝ տեսնելու, թե որքանով են կրթական նորարարություններն ու արդի տեխնոլոգիաները կիրառելի մեր կրթական իրականության մեջ: Նախ ուսումնասիրեցինք, ապա գործի անցանք:

Իրական քայլերից դեպի հեռահար նպատակներ

Մենք ձեռավորեցինք «Այբ» առարկայական խմբեր՝ խորացված դասընթացների դասավանդման մեթոդաբանության մշակման, տարբեր առարկաների մասսայականացման նպատակով: Հիմնեցինք առաջին «ԱյբԼաբ»-երը՝ ժամանակակից եւ ամբողջովին համալրված լաբորատորիաներ, Երեւանի դպրոցներից մեկում: Յայաստան ներմուծեցինք աշխարհի լավագույն կրթական ռեսուրսները՝ դրանք հասանելի եւ անվճար դարձնելով հայ ուսանողների ու դասախոսների համար: Սրանք «Այբ»-ի ստեղծած նոր կրթական միջավայրերն էին:



Երիտասարդ տաղանդները՝ Յայաստանի «դեսպաններ»

«Այբ»-ի մեկ այլ նախաձեռնությամբ կրթաթոշակներ տրամադրվեցին Յայաստանի եւ սփյուռքի մի խումբ տաղանդավոր երիտասարդների՝ օգնելու նրանց ուսանել աշխարհի առաջատար կրթօջախներում, ինչպիսին են՝ ԱՄՆ Ստենֆորդի եւ Կոլումբիայի համալսարանները, Գերմանիայի Ապսենի եւ Բեռլինի համալսարանները, Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, Լոմոնոսովի անվան պետական համալսարանը:



Լայն հնարավորություններ՝ շնորհալի երեխաներին

«Այբ»-ի «Առարկայական խորացված դասընթացներ» ծրագրի առաջին շրջանավարտները հաղթահարեցին աշխարհի առաջնակարգ համալսարանների բարձունքները՝ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի SAT թեստերից 800 հնարավորից վաստակելով 800 միավոր: Սա արդյունք էր մեր երեխաների տաղանդի եւ նրանց ներուժն իրագործելու համակարգված ջանքերի: Նրանք իրենց օրինակով ցույց տվեցին, որ բոլոր հայ օժտված դպրոցականներն ունեն նման հնարավորություն:



«Այբ»-ի ծրագրերը՝ բարձր ուշադրության ներքո

«Այբ»-ի պատվիրակությունը ներկայացրեց դպրոցի իր ծրագիրը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ուշադրությանը: Նախագահը բարձր գնահատեց «Այբ»-ի ջանքերը կրթական ոլորտում եւ իր պատրաստակամությունը հայտնեց՝ աջակցելու դպրոցի ծրագրի իրականացմանը:



Նոր մանկական կրթական շարժում Յայաստանում

«Այբ»-ի մեկ այլ ծրագիր՝ «Կենդուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթը, զարկ տվեց Յայաստանում նոր մանկական կրթական շարժման: Ամեն տարի մինչեւ 40,000 աշակերտ է մասնակցում այս մրցաշարին, ինչն ապացուցում է երեխաների հետաքրքրությունն ուսման հանդեպ: «Այբ»-ը շարունակում է Յայաստանի երեխաներին ներգրավել միջազգային ճանաչում ունեցող այլ դպրոցական մրցույթներում, ինչպիսին են «Ռուսական արջուկ. լեզվաբանություն բոլորի համար» եւ «Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար» մրցույթները:



Լայնություն՝ 40.22506, երկայնություն՝ 44.5289

«Այբ» դպրոցը ձեռք բերեց աշխարհագրական հասցե: ԴՅ Կառավարությունը որոշում կայացրեց «Այբ» դպրոցի ծրագրի համար հատկացնել 7 հա հողատարածք՝ Երեւանի Թբիլիսյան խճուղուն հարող հատվածում: «Այբ»-ը ձեռնամուխ եղավ ավագ դպրոցի գործարար ծրագրի, ճարտարապետական նախագծի եւ կառավարման համակարգի մշակմանը՝ իրենց մասնագիտական ոլորտներում առաջատար կազմակերպությունների հետ համագործակցությամբ:


Չարգացող կրթությանը համաքայլ

«Այբ»-ը նախաձեռնեց վարպետության դասերի շարք ուսուցիչների համար թե՛ Երեւանում եւ թե՛ մարզերում՝ օգնելու նրանց քայլել ժամանակի գիտական ու տեխնոլոգիական զարգացումներին համընթաց: «Այբ»-ը նաեւ համագործակցություն է հաստատել Բենիուր Փախչանյանի անվան հիմնադրամի հետ, որն ամեն տարի մրցանակներ է սահմանում լավագույն ուսուցիչների համար:









Եվս մեկ՝ «Այբ» միջազգային դպրոց

Այսօր մենք կարող ենք փաստել, որ հայկական միջազգային դպրոցների ցանցի ստեղծման մեր վաղեմի երազանքն իրականացել է: Այսօր մենք՝ այդ երազանքի հավատարիմ հետեւորդներս, ուրախ ենք հայտարարելու հերթական հայկական միջազգային դպրոցի բացման մասին:



Կյանքի կոչելով գաղափարներ

«Այբ» ավագ դպրոցի ճարտարապետական նախագիծն ու գործարար ծրագիրը թղթից գործի են վերածվում: Ֆոնդահայթայթման մեկնարկած լայնածավալ արշավը հնարավորություն է յուրաքանչյուրի համար՝ ընդհանուր գործի մասնակիցը դառնալու:



Ներգրվելով հասարակությանը «Հայկական դպրոցի» հայեցակարգի մշակման գործընթացում

Հայկական դպրոցի հայեցակարգը չի կարող լինել մեկ հանճարի մտքի արգասիք: «Այբ»-ը նախաձեռնեց հասարակական քննարկումների շարք «Հայկական դպրոցը» թեմայով՝ նպատակ ունենալով հանրությանը հասանելի դարձնել դպրոցի նախագիծը եւ շահագրգիռ խմբերին ներգրավել դպրոցի ամբողջական տեսլականի ձեւավորման մեջ: Արդյունքը հանրության ակտիվ մասնակցությունն ու աջակցությունն էին նախագծին:

Հիմնական շեշտը՝ կրթության ներքին ճարտարապետության վրա

Աշխարհի լավագույն տպագրատների՝ Փիրոսնի, Քեմբրիջի եւ Օքսֆորդի ավելի քան 300 անուն դասագրքերն ու ձեռնարկներն ընտրվել են բերվել են Հայաստան: Այժմ դրանցից լավագույնները թարգմանվում են հայերեն: Այս գրքերը ոչ միայն կկազմեն «Այբ» դպրոցի ուսումնական ծրագրի հիմքը, այլեւ կհամալրեն Հայաստանի կրթական ռեսուրսները:

Առաջին աստղերը

2011թ. սեպտեմբերի 1-ին առաջին 72 աշակերտները մուտք գործեցին «Այբ» ավագ դպրոց: Այս երիտասարդները մեր դպրոցի ապագա առատ հունձքի առաջին ծիլերն են, մարդկային լուսատուների ուղեծրի առաջին աստղերը, եւ այս տաղանդավոր երիտասարդներն են կերտելու Հայաստանի դիմագիծը համաշխարհային ասպարեզներում:

Առաջին հայկական դպրոցական ավանի հանդիսավոր բացումը Երեւանում

Դպրոց, մեղիա արվեստների կենտրոն, եկեղեցի եւ համայնքային կենտրոն, գործարար կենտրոն, մանկապարտեզ, հանրակացարաններ, բնակելի համալիր, կանաչապատ տարածքներ... Առաջին հայկական դպրոցական ավանի՝ «Այբ» կրթական հանգույցի հանդիսավոր բացումը Երեւանում...



Նպատակին տանող քայլեր

Նպատակին տանող քայլեր

«Այբ» ավագ դպրոց

Երեւանի հյուսիսային հատված
Թբիլիսյան խճ. 11/11
7 հա հողատարածք

Շենքեր

3300 քմ ընդհանուր մակերես

Ա մասնաշենք՝ լաբորատորիաներ, գրադարան, արվեստների ստուդիա, դահլիճ, բուժկետ, դասասենյակներ:

Բ մասնաշենք՝ մարզասրահ, ճաշարան, նիստերի դահլիճ, դասասենյակներ:

Ներդրումներ

3,2 մլն ԱՄՆ դոլար



Տարածք

«Այբ» ավագ դպրոցը «Այբ կրթական հանգույց» դպրոցական ավանի առաջին բաղադրիչն է: Ավագ դպրոցից հետո «Այբ կրթական հանգույցում» հաջորդաբար կառուցվելու են միջին և կրտսեր դպրոցները, մանկապարտեզը, եկեղեցին և համայնքային կենտրոնը, մեդիա արվեստների կենտրոնը, հանրային այգիներ և այլն:

Ընդունելություն

«Այբ» ավագ դպրոցը նախատեսված է 240 աշակերտի համար: 2011-2012 ուս. տարում կատարվել է 72 աշակերտի ընդունելություն՝ երեք 10-րդ և մեկ 11-րդ դասարանների համար, յուրաքանչյուր դասարանում՝ 18 աշակերտ:

Աշակերտները բաշխված են ըստ մասնագիտական ուղղությունների՝ «Մաթեմատիկա և ՏՅՏ», «Բնական գիտություններ», «Յուրաքանչյուր գիտություններ» և «Տնտեսագիտություն և գործարարություն»:

Կրթաթոշակներ

Առաջատար կրթական համակարգերի ծաղկաբաղ



«Այբ» դպրոցը մասնավոր կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: «Այբ» ավագ դպրոցը ընդունվում են միայն ըստ քննությունների արդյունքների, եւ աշակերտի վճարունակությունն ընդունելության ընթացքում ոչ մի դեր չի խաղում: Դպրոցի ընդունող հանձնաժողովը գործում է ֆինանսական աջակցության հանձնաժողովից անկախ. ընդունելության գործընթացում աշակերտի ֆինանսական միջոցների մասին ընդունող հանձնաժողովը տեղեկանալու իրավունք չունի: Ընդունվելուց հետո աշակերտը կրթաթոշակի համար կարող է դիմել ֆինանսական աջակցության հանձնաժողովին՝ հիմնավորելով հայցը: «Այբ»-ի կրթաթոշակային համակարգը հավասար հնարավորություն է ընձեռում բոլոր ընդունված աշակերտներին՝ բավարարելով նրանցից յուրաքանչյուրի՝ կրթաթոշակ ստանալու հիմնավորված պահանջը:

2011-2012 ուս. տարում ընդունված 72 աշակերտից 48-ը «Այբ»-ի կողմից ստացել է ուսման կրթաթոշակ՝ 92.795.000 դրամ ընդհանուր գումարի չափով:

«Այբ»-ի կրթական գաղափարը խարսխված է հետեւյալ դիմամիկ սկզբունքի վրա՝ վերցնել լավագույն ծրագրերը լավագույն կրթական համակարգերից եւ համադրել մեկ ամբողջական պատկերի մեջ: Անցյալ հինգ տարիների ընթացքում «Այբ»-ի մասնագետներն ուսումնասիրել եւ ծաղկաբաղ են արել աշխարհի առաջատար կրթական համակարգերից՝ ի մի բերելով եւ համատեղելով դրանց լավագույն բաղադրիչները մեկ եզակի համակարգում:

«Այբ»-ի կրթական գաղափարը համահունչ է սրբոց Թարգմանչաց կողմից հիմնված հայ դպրության հարուստ ավանդներին, որոնց շնորհիվ դարեր շարունակ հայկական կրթությունը եղել է մրցունակ՝ ապահովելով հայերի հոգեւոր եւ մշակութային շարունակականությունը: Մենք չենք ցանկացել պատճենել հաջողված կրթական համակարգերից որեւէ մեկը, այլ, հետեւելով դրանցից յուրաքանչյուրին, ստեղծել ենք մերը:

Ապագայի հասանելիության միջավայր

Փորձարկելով տեսականը գործնականորեն



ԴՄՖԵԽՈՒՄՈՂՄԻՄ ԳՈՄՔԻՍՔԵԼՆԻ

Կրթական միջավայրի նախագծումը նրբագույն խնդիր է: «Նոր գինին նոր տիկի մեջ» ավետարանական սկզբունքն արտահայտված է մեր ճարտարապետական լուծումներում:

Երկար տարիներ աշխատելով Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի եւ Հարվարդի համալսարանի առաջատար ճարտարապետների եւ գիտնականների հետ՝ մենք որոնել ենք այն գաղափարական միջավայրը, որը համահունչ է մեր կրթական փիլիսոփայությանը: Մենք ձգտել ենք ստեղծել այնպիսի կրթական տարածություն, որը համակում է ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու եւ արարելու: «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի բացառիկ նախագծային լուծումները վերջնական մարմնավորման ենթարկեցին «Այբ»-ի կրթական գաղափարը: «Այբ» դպրոցը զինված ու համալրված է ստեղծագործ գաղափարների իրականացմանն անհրաժեշտ ժամանակակից տեխնոլոգիաներով, որպեսզի մեր աշակերտները համաքայլ ընթանան արագորեն զարգացող գիտությանը եւ իրական ժամանակում փորձարկեն ու բացահայտեն ստացած գիտելիքները:

«Այբ» ավագ դպրոցի ուսուցման մեթոդաբանության հիմքում ընկած է ծրագրահեն ուսուցումը: Ցանկացած աշակերտ ուսման ցանկացած պահի ներգրավված է առօրյա կյանքում իրականացվող տարբեր ծրագրերում կամ նախագծերում՝ գործնականորեն ստուգելով ու կիրառելով իր գիտելիքները, զարգացնելով իր հաղորդակցման, թիմային աշխատանքի հմտությունները, կողմնորոշվելով հետագա մասնագիտության ընտրության հարցում:

ԴՄՖԵԽՈՒՄՈՂՄԻՄ ԳՈՄՔԻՍՔԵԼՆԻ

Անհատական ուսումնական ծրագիր

Առողջ ապրելակերպ եւ գեղեցիկի ընկալում



«Այբ» ավագ դպրոցում ամեն աշակերտ ունի իր անհատական ուսումնական ծրագիրը, որը կազմված է հիմնական եւ ընտրովի առարկաներից: Հիմնական առարկաները դասավանդվում են ստանդարտ եւ խորացված մակարդակներով: «Այբ»-ը մշակել է արդյունավետ եւ համակողմանի կրթության կրեդիտային համակարգ, եւ յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր ընտրությունն ըստ մշակված կրեդիտային սկզբունքների: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ընտրի առնվազն երեք խորացված առարկա եւ հավաքի նվազագույն կրեդիտներ արվեստներից: Մեծ ուշադրություն է դարձվում լեզուների ուսուցմանը եւ աշակերտների՝ խոսելու եւ գրելու կարողությունների զարգացմանը: «Այբ» ավագ դպրոցում դասավանդվում է 52 առարկա: Եզրափակիչ 12-րդ տարում «Այբ»-ի աշակերտներին առաջարկվում են AP (Advanced Placement) դասընթացներ, որոնք կրեդիտավորվում են աշխարհի առաջատար բուհերում:

Սպորտի եւ արվեստի դասերն ու ակումբային աշխատանքները օգնում են «Այբ»-ի աշակերտին համակողմանի զարգանալ ոչ միայն մտքով, այլեւ հոգով ու մարմնով: «Այբ» դպրոցում լողը եւ մարմնամարզությունը պարտադիր առարկաներ են՝ որպես առողջության երաշխիք: «Այբ»-ն առաջարկում է սպորտի դասավանդման մեծ տեսակակի: Արվեստի տարբեր ոլորտներին առնչվող առարկաները եւ խմբակները նպատակ ունեն զարգացնելու աշակերտների՝ գեղեցիկը տեսնելու, լսելու եւ ճանաչելու կարողությունները եւ բեռնաթափելու ակադեմիական կրթության բավականին ինտենսիվ գործընթացը:

Գիտելիքը՝ արժեքների հենքի վրա

Մենտորական համակարգ



Արժեքային և աշխարհայացքային համակարգի ձևավորումը կրթության հիմնախնդիրներից է: Մեր նպատակն է ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի: Տեսականի և գործնականի համադրումը «Այբ» դպրոցի կարեւորագույն սկզբունքներից է: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իրականացնի հասարակական աշխատանքի որոշակի նվազագույն ծավալ:

«Այբ»-ի կրթական գաղափարի կարեւորագույն սկզբունքներից է մենտորական համակարգի կիրառումը: «Այբ»-ի մենտորը կրթությամբ իրագործված մարդ է, ով պատրաստ է ժամանակ հատկացնել, սեփական փորձառությամբ կիսվել, կյանքի խորհուրդներ տալ և մասնագիտական կողմնորոշման մեջ օգնել «Այբ»-ի աշակերտին:

Աշխարհի առաջատար կրթական համակարգերում լայնորեն կիրառվող «ավագ» և «կրտսեր» ընկերների այս փոխհարաբերությունը էապես հարստացնում է կրթության գործընթացը և ապահովում սերունդների երկխոսությունը կրթության ոլորտում: «Այբ» կրթական համայնքն իր հարուստ փորձառությամբ մեծ հնարավորություններ է ընձեռնում այս ասպարեզում:

«Այբ» ավագ դպրոցում դասավանդվող առարկաները

Հայագիտական
առարկաներ

Օտար
լեզուներ

Ճշգրիտ
գիտություններ

Բնագիտական
առարկաներ

Հասարակա-
գիտական
առարկաներ

Արվեստներ

Հայոց լեզու և գրականություն

Հայոց լեզու և գրականություն | խորացված
ժամանակակից հայ գրականագիտություն

Գրաբար

Լրագրություն

Անգլերեն և ստեղծագործ գրարվեստ

Անգլերեն և ստեղծագործ
գրարվեստ | խորացված

Ռուսաց լեզու

Ֆրանսերեն

Գերմաներեն

Իսպաներեն

Լատիներեն

Հին հունարեն

Սպորտ

Ֆիզիկական պատրաստություն
Լոզ

Մաթեմատիկա

Մաթեմատիկա | խորացված

Տեղեկատվական և
հեռահաղորդակցության
տեխնոլոգիաներ

Տեղեկատվական և
հեռահաղորդակցության
տեխնոլոգիաներ | խորացված

Նախնական գինվորական
պատրաստություն

Ֆիզիկա

Ֆիզիկա | խորացված

Քիմիա

Քիմիա | խորացված

Կենսաբանություն

Կենսաբանություն | խորացված

Աշխարհագրություն

Աստղագիտություն

Ռոբոտիկա

Գործարարության հիմունքներ

Գործարարության հիմունքներ | խորացված

Հայոց պատմություն

Հայ Եկեղեցու պատմություն

Համաշխարհային պատմություն

Հոգեբանություն

Քաղաքագիտություն

Պետություն և իրավունք

Փիլիսոփայության հիմունքներ

Հին հունական փիլիսոփայություն

Աստվածաբանություն

Ծանաչողության տեսություն

Սոցիոլոգիա

Պարարվեստ

Երգչախումբ և երգեցողություն

Խոսքի արվեստ

Գծանկար

Լուսանկարչություն

Համակարգչային դիզայն

Տեսողական արվեստներ

Սցենարական արվեստ

Հայ մշակույթի պատմություն

«Այբ»-ի աշակերտներ

«Այբ» դպրոց ընդունվելը դյուրին չէ: Դիմորդները պետք է հանձնեն հայերենի, անգլերենի, տրամաբանության, մաթեմատիկայի եւ բնական գիտությունների բավականին լուրջ քննություններ եւ անցնեն հարցազրույցի փուլով: Աշակերտներին օգնելու նպատակով «Այբ»-ն ամեն տարի կազմակերպում է նախապատրաստական դասընթացներ, որպեսզի աշակերտները կարողանան բարեհաջող հանձնել ընդունելության քննությունները:



«Այբ»-ի աշակերտի նկարագիրը

Ճանաչող	Նախաձեռնող
Արարող	Հավասարակշռված
Բարեխոհ	Չգոն
Հոգատար	Բաց

«Այբ»-ի ուսուցիչներ

Անհնար է պատկերացնել որակյալ կրթական միջավայր առանց բարձրակարգ մասնագետների: Ավելի քան հինգ տարի աշխատելով կրթության ոլորտում՝ մենք սահմանել ենք համաշխարհային մրցունակ կրթության չափանիշներ եւ ըստ այդ չափանիշների ընտրություն կատարել: Մենք փորձել ենք դպրոց բերել առաջատար մանկավարժների, գիտնականների, արվեստագետների եւ մշակույթի գործիչների: Մենք խրախուսում ենք տաղանդավոր ստեղծագործողների, ուսումնասիրողների, հետազոտողների մուտքը «Այբ» միջավայր՝ կրթության անպտուղ իներցիաները հաղթահարելու եւ աշակերտների ստեղծագործական ներուժը խթանելու համար:



Ուշագրավ թվեր եւ փաստեր

«Այբ» ավագ դպրոցում այսօր դասավանդում է 46 ուսուցիչ: Նրանցից՝

- 20-ը՝ գիտությունների դոկտոր եւ թեկնածու.
- 2-ը՝ արվեստի վաստակավոր գործիչ.
- 7-ը պատրաստվում է թեկնածուական թեզի պաշտպանությանը.
- 62%-ը վերապատրաստվել կամ դասավանդել է արտասահմանում.
- 18-ը ունի տասը եւ ավելի տարիների մանկավարժական փորձառություն:

«Այբ» դպրոցում դասավանդում են մասնագետներ Հայաստանից, Ֆրանսիայից, Անգլիայից, Շվեդիայից, որոնք ունեն 500-ից ավելի հրատարակված գրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտահետազոտական հոդվածներ:

Ինչ-որ մեկն ասել է.

«Մենք կարող ենք անել երկուսից մեկը՝ անել ինչ-որ բան կամ ոչինչ չանել»:

Կորոշես տնկիներ նվիրել դպրոցի կանաչապատ տարածքների համար,
կահավորել դասասենյակ կամ նվիրաբերել սարքավորումներ,
ֆինանսավորել մի ամբողջ մասնաշենքի շինարարությունը
կամ տրամադրել կրթաթոշակ մեկ տաղանդավոր աշակերտի համար,

Դու միանում ես կրթությանն աջակցողների համաշխարհային ցանցին:

Դու օգնում ես սերունդ ձեռավորել:

Դու կառուցում ես... դարերի համար:

«Այբ» ավագ դպրոցի աջակիցները

Մեր խորին հիացմունքը եւ երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն ու աջակցությունն են բերել «Այբ» դպրոցի իրականացմանը: «Այբ» դպրոցը բյուրեղացում է մեր հնգամյա ջանքերի, ժամանակային եւ նյութական լուրջ ներդրումների, պատասխանատվության եւ սիրո՝ հանուն բարի եւ աստվածահաճո նախաձեռնության:

Բարերարներ

Աշոտ Ասլանյան
Հայաստան / Ռուսաստան

Աշոտ Թումասյան
Ռուսաստան

Աշոտ Մկրտչյան
Ռուսաստան

Արամ Փախչանյան
Ռուսաստան

Արմեն Շահինյան
Ռուսաստան

Արտակ Չիբուկչյան
Հայաստան

Դավիթ Յան
Ռուսաստան

Դավիթ Փախչանյան
Ռուսաստան

Կարո Սարգսյան
Ռուսաստան

Ղարիբ Մովսիսյան
Ռուսաստան

Ռուբեն Հարությունյան
Ռուսաստան

«ԴԱՐ» հիմնադրամ
Հայաստան

Հովանավորներ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյան

Ավետիք Զալարյան
Հայաստան / Ռուսաստան

Գարո Արմեն
ԱՄՆ

Գոռ Նահապետյան
Ռուսաստան

Րաֆֆի Ֆլաթթգոյան
ԱՄՆ

Դավիթ եւ Աննա Պարտասարյան Թրասթ
ԱՄՆ

Հայաստանի բանկերի միություն

«Ապավեն» ՍՊԸ
Հայաստան

«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հայաստան

«Արցախբանկ» ՓԲԸ
Հայաստան

«Չիզգագ» ՍՊԸ
Հայաստան

«Թերմորոս-Ար» ՍՊԸ
Հայաստան

ՀԲԸՄ Շվեյցարիայի մասնաճյուղ

«Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ
Հայաստան

Պրոֆ. Յան Շի եւ Սիլվա Յան
Ռուսաստան / Թայվան

«Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
Հայաստան

Նվիրատուներ

Ալֆրեդ Եսայան
ԱՄՆ

Արա Պետրոսյան
Հայաստան

Արթուր Ջանիբեկյան
Ռուսաստան

Արթուր Ջավադյան
Հայաստան

Արմեն եւ Տիգրան Ուզունյաններ
Ռուսաստան

Գարիկ Մարտիրոսյան
Ռուսաստան

Գրեգ Շիրակյան
ԱՄՆ

Դավիթ Փախչանյան
Ռուսաստան

Էդուարդ Գյուլեսերյան
ԱՄՆ

Հուդիթ Սարյան
ԱՄՆ

Ջեյմս Թուֆենկյան
ԱՄՆ

Ռուբեն Գետրոսյան
Ռուսաստան

Սերգեյ Խաչատրյան
Ռուսաստան

Վազգեն Գետրոսյան
Ռուսաստան

Վիկտոր Չարուզյան
ԱՄՆ

Օնիկ Ազնաուրյան
Ռուսաստան

«Մառնիկ» ՍՊԸ
Հայաստան

ԴՈԼ կարող ես մեկ քայլով մոտեցնել ապագան

1. Մասնակցի՛ր «միջուկ-դրամագլխին»,

որը ծրագրի իրականացման հիմքն է եւ բոլոր ներդրումների երաշխավորը



Ընտրի՛ր «Այբ» դպրոցի ստեղծմանը մասնակցելու քո տարբերակը.

1. Դարձի՛ր «միջուկ-դրամագլխի» բարերար
2. Հովանավորի՛ր դպրոցի քո՛ մասը
3. Նվիրաբերի՛ր հանուն դպրոցի զարգացման

Մենք՝ «միջուկ-դրամագլխի» բարերարներս, հանուն դպրոցի ծրագրի իրականացման միավորել ենք մեր ուժերը եւ միջոցները՝ մեծապես ցանկանալով մոտեցնել մեր մեծ երազանքը:

Մենք ստեղծել ենք «միջուկ-դրամագլուխը»՝ որպես բոլոր նախաձեռնությունների հիմք, որպես մեր նպատակի իրագործելիության երաշխիք, որպես մարդկանց միավորման գործիք:

Կոչ ենք անում.

Միավորել ձեր ռեսուրսներն ու միջոցները մեր եւ ձեզ նման այլոց ռեսուրսների հետ՝ «Այբ» դպրոցի ստեղծման համար.

Միանալ «միջուկ-դրամագլխին»՝ հիմնվելով վե՛հ առաքելության գիտակցության, հավասարության ու միասնականության վրա, եւ ձեր ներդրումն ունենալ ընդհանուր գործում «100+» սխեմայով, այսինքն՝ յուրաքանչյուրը 100 հազար ԱՄՆ դոլար:

«Այբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ
Որոշում առ 10.05.2010թ.

2. Հովանավորի՝ ընտրելով եւ անվանակոչելով քո դասասենյակը, քո լաբորատորիան, քո մասնաշենքը...



Դասասենյակներ
յուր.՝ \$30,000



Արվեստների ստուդիա
«Ռոսգոսստրախ-Արմենիա»

Հայաստան դահլիճ



Մարզադահլիճ
\$350,000




Գրադարան
Ի յիշատակ ՏԵՐ ԱՐՄԵՆ աւ. քիչ Միլենոսեանցի



Ճաշարան
\$ 150,000



Քիմիայի լաբորատորիա
«Ապավեն»



3.

Պարզապես Նվիրաբերի՛ր հանուն «Հայկական դպրոցի» ստեղծման եւ տարածման

Ընտրի՛ր միանալու երեք ձեւերից մեկը

1. Բանկային փոխանցումներ «Այբ» կրթական հիմնադրամին

	AMD	USD	EUR	RUB
Միջնորդ բանկ		HSBC Bank USA New York US SWIFT address: MRMDUS33 Chips://108 Correspondent a/c No. 000-05145-4 ABA: 021001088	HSBC Bank PLC SWIFT address: MIDLGB22 IBAN: GB52M IDL4005 1539024668	ОАО Банк ВТБ МОСКВА, РОССИЯ БИК 044525187 К/СЧ 30101810700000000187
Ստացողի բանկ	Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան, Երեւան, Հայաստան	HSBC Bank Armenia CJSC, Yerevan, Armenia SWIFT address: MIDLAM22	HSBC Bank Armenia CJSC, Yerevan, Armenia SWIFT address: MIDLAM22	/3011181055550000158 ИНН 7702070139 АОЗТ "ИНЕКОБАНК", КОРПУС ФИЛИАЛ ЕРЕВАН, АРМЕНИЯ
Ստացող	«Այբ» կրթական հիմնադրամ	Ayb Educational Foundation	Ayb Educational Foundation	Образовательный фонд «Айб»
Հաշվեհամար	005-053483-001	005-053483-101	005-053483-102	2050442011971040
Նպատակ	Նվիրաբերություն «Այբ» դպրոցի համար	Donation for Ayb High School	Donation for Ayb High School	Дарение для школы «Айб»

2. Հարկային արտոնություններով նվիրաբերություններ ԱՄՆ քաղաքացիների համար

Այս տարբերակը հնարավոր է մեր գործընկեր **VEM USA (501 c3)** կազմակերպության միջոցով: Խնդրում ենք տեղեկացնել «Այբ»-ին փոխանցման մասին, որպեսզի հետեւենք դրան: **Պարտադիր նշեք փոխանցման նպատակը՝ նվիրաբերություն «Այբ» դպրոցի համար:**

ա) VEM USA-ին դրամական փոխանցումների համար

Bank's Name: City National Bank
Address: 550 N Brand Blvd, Glendale CA 91203
Routing: 122016066
Swift Code: Cinaus61
Beneficiary's Name: Vem USA, Inc.
Beneficiary's Account: 430418092

բ) VEM USA-ի հասցեով չվեր ուղարկեք հետեւյալ հասցեով՝ 2858 Pinelawn Drive, La Crescenta, CA 91214.

3. Կապվե՛ք «Այբ»-ի հետ

Էլ-փոստ՝ school@ayb.am
Հեռ.՝ + (374 10) 54 37 07
Բջջ.՝ + (374 77) 01 08 63
Հասցե՝ Հայաստան, Երեւան 0009, Կոթլուկի փ. 19ա




Մասնակցի՛ր «Այբ» դպրոցի ստեղծմանը եւ զարգացմանը:

Ցանկացած նվիրաբերություն անգին է մեզ համար, յուրաքանչյուր գումար՝ արժեքավոր:

Նվիրատուների անունները կհիշատակվեն պատվո պատին եւ դպրոցի կայքում:

Միացի՛ր



www.armenianschool.am

Ջալաստան, Երեւան 0009,
Կորյունի փ. 19ա
Ջեռ.՝ + (374 10) 54 37 07
Բջջ.՝ + (374 77) 01 08 63
school@ayb.am
www.ayb.am
www.armenianschool.am

